

կանչէ . շուտ բացէք զդուռն . եւ ինչ բան եւ
զործ որ տեսնու՛ պատմէ աղային զամենայն : 275

Եւ ոչ թէ միայն զգազանս եւ զանասունս
եւ զթռչունս , այլ եւ զերկաթս եւ զպղինձս ի
զործ եւ արվեստս ամեն որպէս շնչաւորս . զի
չինեն երկաթի տօլապնի , որ զմիսն խորո-
վեն , եւ սահաթնի եւ երկաթի մարդիք որ 280
զանկակ զարնեն . եւ ազդի ազդի մանրար-
վեստ սահաթնի , որ տեսողացն է սքանչելի :
Կան եւ արծիւք ի վերայ սահաթնուն , զի երբ
կամիս սահաթն զարնել , արծիւն զթեւսն տա-
րածեալ ծախս հարկանէ : Եւ կան ժամադի- 285
տակը շինած , որ քանի ժամուն ուղես զար-
թուցանէ զքեզ , թէ մէջ գիշերի , թէ հաւա-
խօսի . եւ այնչափ զարնէ մինչեւ զարթիս եւ
փառք տաս Աստուծոյ : Այլ եւ անզգայ տարե-
րաց որպէս ջրոյն երգս երգել տան . եւ փողն 290
հնչէ եւ մարդկօրէն ծառայէ . նոյնպէս եր-
կաթն , փայտն եւ այլն : Զոր եւ այլ բազում
բանս եւ զործս տեսեալ փառս տվաք Աստու-
ծոյ :

ՀԱՆԿԵՍՔ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ

Եւ ի Գարնաւայն , որ է մեծ Բարեկեն-
դանք , դայն երկու շարաթն ամէն օր մէկ խաղ
մի եւ շատլիս կ'առնեն ի խրախութիւն եւ ի
ծիծաղ մարդկան . եւ հրաշալի թամաշանիս
զործեն , որպէս թէ ատրօնս : Եւ ի սուլթան 5
Պայազխուռ ավլուն շինեն բերթք . մինն քրիս-
տոնէից եւ միւսն անհաւատից . զոր կովեալ
յաղթեն հաւատացեալք : Այլ օր կէմէսզան